## ԱՌ ՄԵԾ. Գ. Մ. ՍԱՆԱՍԱՐԵԱՆՑ.

Դու Տէր, գթած մարդասէր, ցրուած պանդուխտ Հայերին,
Տուր բարութիւն մի քիչ էլ մեր այս դժբախտ օրերին:
Աշխարհումս օրէցօր ամէն ազգ յառաջ գնան,
Անկարգ դրութեամբ միայն Պարսկահայեր են մնան:
Ամենից շատ նեղութիւն կրեցին մեր նախնիքըն,
Սակայն դորանց փոխադարձ չեղաւ մեզ հատուցումըն:
Շատ տեղերում մեր Հայեր գործերով յաջողակ են,
Իւրեանց զուարճ օրերում արդեօք մեզ մտաբերե՞ն:
Կեցցէ ապա ազգասէր Մկրտիչ Սանասարեանց,
Որ իւր սրտեա աչօք նկատեց մեզ հեռուանց,
Դիտեց Պարսից կեդրոնի Հայկազնեան վարժարանն,
Յանուն նորա շնորհեց իւր աննախանձ նուէրն:
Մայր Աթոռի Արարատ ամսագիրը շարունակ
Ձրիաբար տալիս է մեզ իւր անուան յիշատակ:
Վեհանձնդ դու, Թէհրանու Հայք վայելեն քո նուէր,
Մատաղ մանկունք մշակեն նորանով իւրեանց մտքեր:
Տեղւոյս մեր ազգայինքն ստանան տեղեկութիւն,
Խաւարմամբ կ՚ուղղեն իւրեանց կրօնական թերութիւն:
Շատերի սրտի մէջըն սերմանէ կրօնքի սէր,
Աճենալով զարգանան՝ տան քաղցրահամ պտուղներ:
Եղար բարի օրինակ, թող ընթացքիդ հետևեն,
Մեր ազգայինք տեսնելով բարի նախանձով վառուեն:
Երախտագէտ սրտիւ արդ մաղթէ Թէհրանու Հայը,
Որ քեզ օր կեանք երջանիկ շնորհէ Բարերարը:
Այս մաղթանքի ձայներէն վառուած անկեղծ ի սրտանց,
Կեցցէ՛ն [illegible] Արարատ, կ՚գոչէ Մ. Բժշկեանց:

## ՏՓԽԻՍԵԱՆ ՆՊԱՍՏԱՀԱՒԱՔ ՄԱՍՆԱԺՈՂՈՎՈՅ ՀԱՇԻՒ.

Ի նպաստ Բագրեւանդցի Հայոց նուէրներ հաւաքելոյ եւ մատակարարելոյ համար ի Տփխիս կազմուած Մասնաժողովոյ յանուն Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց ուղղած մի յայտարարութեան հետ եղած տեղեկութիւններէն հետագայ հաշիւը քաղելով հրատարակել արժան կհամարիմք:

Մուտք.

| | | | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|
| Օգոստոսի | 18, | Ա. Անանովից ստորագրութեամբ ժողոված . . . | 9531 | 93 |
| » | » | Կ. Խէրութովից ստորագրութեամբ հաւաքուած . | 204 | |
| » | » | Խ. Սուրգունովից ստորագրութեամբ հաւաքուած . | 689 | |
| » | » | Առևտրական բանկի տոմսակների տոկոսից . . . | 41 | 72 |
| » | 23, | Գ. Արծրունուց ստորագրութեամբ հաւաքուած . | 323 | 21 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սեպտեմբեր | 5, | Գոմբորի հասարակութիւնից . . . . . . . | 72 | 17 |
| » | » | Լ. Մելիք Բէգլարովից արուեստաւորներից հաւաքուած . . . . . . . . . . . | 40 | |
| » | » | Գ. Արծրունուց ստորագրութեամբ հաւաքուած . | 100 | |
| » | » | Կ. Բէհբութովից ստորագրութեամբ հաւաքուած . | 106 | |
| » | 16, | Թիֆլիսի ժողովից Թիֆլիսի առեւտրական բանկի տոմսակ . . . . . . . . . . . . | 1601 | |
| » | » | Առեւտրական բանկից գնումների տոկոսից . . . | 11 | 48 |
| » | » | Գ. Արծրունուց ստորագրութեամբ ժողոված . . | 797 | 13 |
| » | » | Բ. Սուրգունովից ստորագրութեամբ ժողոված . | 764 | |
| » | 23, | Ա. Յովհաննէսեանից ստորագրութեամբ ժողոված . | 700 | |
| » | » | Ա. Ենանովից Աստրախանի մէջ ստորագրութեամբ ժողոված . . . . . . . . . . . . . | 1447 | |
| » | 30, | Սեպտեմբերի 29 ին Աղէքսանդրեան այգիում տուած ժողովրդական զբօսանքից . . . . . . | 4472 | |
| | | Ընդ ամէնն | 20900 | 64 |

Ելք.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սեպտեմ. | 5, | Ուղարկած է Երեւան Ա. Խատիսովին փոխանակագիր Սողոմոն Մելիքովի փոստի ծախսով . . . | 1000 | 23 |
| » | 7, | Տուած է պ. Ղամբարովին ժողովրդական զբօսանքի պատրաստութեան համար . . . . . . | 200 | |
| » | 15, | Տուած Գ. Արծրունուն դիւանատան ծախսերի համար | 100 | |
| » | » | Վճարած է Երեւան ուղարկած դեղերի ճանապարհի ծախս . . . . . . . . . . . . . | 23 | |
| » | 19, | Տուած է Մ. Սալամբէգովին ժողովրդական զբօսանքի պատրաստութեան համար . . . . . . | 300 | |
| » | » | Ուղարկած է Երեւան Յ. Խատիսովին փոխանակագիր Զաքարիա Գէորգովից փոստի ծախսով . . | 2000 | 23 |
| » | 20, | Տուած է Կ. Մութաֆօվին գաղթականների համար առած ապրանքի համար հաշիւ № 128 . . | 1108 | 80 |
| » | 22, | Տուած է Յ. Չիթախովին ժողովրդական զբօսանքի համար առնված իրեղէնների համար . . . | 34 | 20 |
| » | » | Յ. Չիթախովին գաղթականների համար առած ապրանքի համար . . . . . . . . . . . | 855 | 45 |
| » | » | Մշակներ . . . . . . . . . . . . . . | 3 | 50 |
| » | 23, | Պ. Գուրգէնբէգովին ֆէյերվերկի համար . . . | 100 | |
| » | » | Տուած է Պ. Ղամբարովին ժողովրդական զբօսանքի պատրաստութեան համար . - . . . . . | 200 | |
| » | » | Թիֆլիսի Առեւտրական բանկի ընթացող հաշւում | 14962 | |
| » | » | Առձեռն փող կասայում . . . . . . . . . . | 13 | 23 |
| | | Ընդ ամէնը | 20900 | 64 |